17740

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՀՐԱՎԱՆԳԻ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ
1927 թ.

24 JUL 2013
19740

Դուրս եկեք բոլոր յերկրների, միացեք.

ՍԱՌՈՅՈՒԹ
ՄԱՍԱՄՈՂՈՒՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԱՐԽԱՅԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՄԱՍԵՐ

1 MAR 2010
324
12-11
1003
14680

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԻ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ
1927 թ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս.Ս.Հ.Հ. Պետական Գրադարան
7/31 1922
Ա. ՄՅՈՒ-Ի ՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Доноблит № 7497. Ростов н-Д.
Тип. издательства «Севкавиздат».
Заказ № 3701. Тираж 600 экз.

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

(Քաղաքային և գյուղական խորհուրդների ընտրություններին յեվ խորհուրդներին համագումարներ գումարելու հրահանգի վավերացնելու մասին).

Ի փոխու�ն քաղաքային և գյուղական խորհուրդների ընտրությունների և խորհուրդների համագումարներ գումարելու վերաբերյալ Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից 1925 թվի հոկտեմբերի 13 ին հայտարարած հրահանգի (օրինադրություն 1925 թվի, № 79 հոդ. 603), Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը, ՌՍՖՍՀ-ի սահմանադրության 72-րդ հոդվածի հիման վրա և համապատասխան ՍՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության 1926 թ. սեպտեմբերի 28 ի հրահանգի՝ խորհուրդների ընտրությունների վերաբերյալ (Օրինադրություն ՍՍՀՄ ի 1926 թ. № 66 հոդ. հոդ. 500, 501), ՎՈՐՈՇՈՒՄ Ե.

1. Հաստատել և մտցնել ի գործադրում ՌՍՖՍՀ-ի տերրիտորիայի վրա հետևյալ հրահանգը քաղաքային և գյուղական խորհուրդների ըն-

տությունների և խորհուրդների համագումարներ գումարելու մասին։

2. Իրավունք տալ ինքնավար հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեներին և ինքնավար շրջանների շրջանային գործադիր կոմիտեներին, նույնպես և շրջանացման յենթարկված միացումների յերկրային և շրջանային գործադիր կոմիտեներին—մշակել և մրցնել ի հաստատում Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության, ընտրողական պայքարի սկզբից մի ամիս առաջ, փոփոխումներ և լրացումներ ներկա հրահանգի, վորոնք բղխում են ինքնավար հանրապետությունների, ինքնավար շրջանների, յերկրային և շրջանային շրջանացված միացումների կենցաղային առանձնահատկություններից և այլ տեղական պայմաններից։

———●■●———

ՀՐԱՀԱՆԳ

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՑԵՎԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

Ընտրողական հանձնաժողովների մասին

1. Նպատակ ունենալով ժամանակին և ծրագրային կերպով ընտրություններ կատարել քաղաքային և գյուղական խորհուրդների համար, վիճակային (վոլոստ) ռայոնական, գավառային, շրջանային, նահանգային, յերկրային խորհուրդնե-

րի և սրանց համապատասխան խորհուրդների համագումարների համար, նույնպես և ինքնավար հանրապետությունների և ինքնավար շրջանների խորհուրդների համագումարների և Համառուսական Խորհուրդների Համագումարի համար,—համապատասխան գործադիր կոմիտեներին և խորհուրդներին կից կազմվում են ԸՆՐՈՂԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ։ Այս հանձնաժողովների կազմի մեջ պիտի մացվեն բանվորների և գյուղացիների ներկայացուցիչներ, վորոնք անմիջապես կապված են արտադրության կամ գյուղատնտեսության հետ, նույնպես և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները։

2. ՌՍՖՍՀ ի տերրիտորիայի վրա ընտրողական պայքարի ընդհանուր ղեկավարություն ունենալու համար և ինքնավար հանրապետությունների, ինքնավար շրջանների, յերկրային, շրջանային և նահանգական ընտրողական հանձնաժողովներին հրահանգներ տալու համար, նույնպես և այս ընտրողական հանձնաժողովների գործունեության դեմ տրվող բողոքների քննության համար Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կից կազմվում է Համառուսական Կենտրոնական Ընտրողական Հանձնաժողով, վորի կազմը անհատապես հաստատվում է Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կողմից։

Համառուսական Կենտրոնական Ընտրողական Հանձնաժողովը գործում է առանձին Կանոնադրության հիման վրա, վորը հրատարակվում է Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կողմից։

3. Ինքնավար հանրապետությունների և ինքնավար շրջանների ընտրողական հանձնաժողովները, նույնպես և յերկրային, շրջանային և նահանգական հանձնաժողովները կազմվում են պատշաճ գործադիր կոմիտեների կողմից 11 հոգուց՝ —նախագահից, յերկու ներկայացուցիչներից համապատասխան գործադիր կոմիտեյի կողմից, մի մի ներկայացուցիչներից համապատասխան պրոֆմիությունների միացումից, Համամիութենական Լենինյան Կոմունիստական Ցերիտասարդական Միությունից, ՀԿԿ (բ)-ի կանանց բաժնից, քաղաքային խորհրդից, ազգային փոքրամասնություններից, Կարմիր բանակից, յերկու ներկայացուցիչներից գյուղացիական կազմակերպություններից (գյուղացիական փոխադարձ ոգնության կոմիտե)։

Այս հոդվածում թված ընտրողական հանձնաժողովների նախագահները հաստատվում են Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կողմից Համառուսական Կենտրոնական Ընտրողական Հանձնաժողովի առաջադրությամբ։

4. Շրջանային, գավառական և սրանց համապատասխան ընտրողական հանձնաժողովները կազմում են պատշաճ գործադիր կոմիտեների կողմից 9 հոգուց՝—նախագահից, վորը հաստատվում է յերկրային, շրջանային, նահանգական գործադիր կոմիտեյի կողմից, իսկ ինքնավար հանրապետություններում, վորոնք նահանգական բաժանումներ չունին,—ինքնավար հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեյի կողմից, ըստ պատկանելության, մի մի ներկայացուցիչներից՝ համապատասխան գործադիր կոմիտեյից, շրջանային, գավառական քաղաքի քաղաքային խորհրդից, պրոֆմիությունների միացումից, Համամիութենական Լենինյան Կոմունիստական Ցերիտասարդական միությունից, ՀԿ(բ)-ի կինբաժնից, Կարմիր բանակից, ազգերի փոքրամասնություններից և գյուղացիական կազմակերպություններից (գյուղացիական փոխադարձ ոգնության կոմիտե)։

5. Ռայոնական, վիճակային (վոլոստ) և սրանց համապատասխան ընտրողական հանձնաժողովները կազմվում են պատշաճ գործադիր կոմիտեների կողմից 7 հոգուց՝—նախագահից, վորը հաստատվում է շրջանային, գավառական կամ սրանց համապատասխան գործադիր կոմիտեյի կողմից, յերկու ներկայացուցիչներից ռայոնական, վիճակային կամ սրանց համապատասխան գործադիր կոմիտեյից, մի մի ներկայացուցիչներից՝ պրոֆմիություններից, Համամիութենական Լենինյան Ցերիտասարդական Միությունից, գեղջկուհիների պատվիրակային ժողովներից և գյուղացիական կազմակերպություններից (գյուղացիական փոխադարձ ոգնության կոմիտե)։

6. Գյուղական ընտրողական հանձնաժողովները կազմվում են գյուղական խորհուրդների կողմից 7 հոգուց՝—նախագահից, վորը նշանակվում է ռայոնական վիճակային կամ սրանց համապատասխան գործադիր կոմիտեյի կողմից, 7 հոգուց՝—նախագահից, վորը նշանակվում է ռայոնական, վիճակային կամ սրանց համապատասխան գործադիր կոմիտեյի կողմից, յերկու ներկայացուցիչներից գյուղական խորհրդից, մի

մի ներկայացուցիչներից՝ պրոֆմիութիւններից Համամիութենական Լենինյան Կոմունիստական Ցերիտասարդական Միութիւնից, գեղջկուհիների պատվիրակային ժողովներից և տեղական գյուղացիական կազմակերպութիւններից (գյուղացիական փոխադարձ ոգնության կոմիտե)։

7) Քաղաքային ընտրողական հանձնաժողովները կազմվում են բոլոր քաղաքներում և բանվորական ավաններում, որոնք ունին քաղաքային խորհուրդ, հիշյալ խորհուրդների կողմից 7 հոգուց՝—նախագահից, որը հաստատվում է համապատասխան գործադիր կոմիտեյի կողմից, երկու ներկայացուցիչներից քաղաքային խորհրդից, մի մի ներկայացուցիչներից՝ պրոֆմիութիւններից, Կարմիր բանակից, Համամիութենական Լենինյան Կոմունիստական Ցերիտասարդական Միութիւնից և աշխատավորուհիների ներկայացուցչից, որը ընտրվում է աշխատավոր կանանց համաքաղաքային պատվիրակային ժողովում։

Ծանոթություն՝ Շատից դուրս (անդավառ) քաղաքների կամ բանվորական ավանների քաղաքային ընտրողական հանձնաժողովների նախագահները հաստատվում են շրջանային, գավառական կամ սրանց համապատասխան գործադիր կոմիտեների կողմից։

8. Խոշոր քաղաքներում, համապատասխան քաղաքային խորհուրդների վորոշմամբ, կարող են կազմվել ռայոնական ընտրողական հանձնաժողովներ, վորոնց կազմը նախատեսված է սույն հրահանգի նախորդ հոդվածով։

Ռայոնական ընտրողական հանձնաժողովների նախագահները հաստատվում են համապատասխան քաղաքային խորհուրդների կողմից։

9. Այն գյուղերում, վիճակներում, ռայոններում և յքաղաքներում, վորտեղ նշանավոր թվով ազգային փոքրամասնություններ կան, գյուղական վիճակային, ռայոնական և քաղաքային ընտրողական հանձնաժողովների կազմի մեջ է մտնում գործկոմի ներկայացուցիչների թվում նաև մի ներկայացուցիչ ազգ. փոքրամասնություններից։

10. Այն տեղերում, ուր բացակայում են մի քանի պետական որգաններ և հասարակական կազմակերպութիւններ, վորոնց ներկայացուցիչները պիտի մտնեն համապատասխան ընտրողական հանձնաժողովների մեջ, այս կամ այն կազմակերպության ընտրելու գործը, վորոնց ներկայացուցիչները պիտի փոխարինեն բացակայող պետական որգանների կամ հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչներին, վերապահվում է՝—հանրապետական, շրջանային և նահանգական ընտրողական հանձնաժողովների վերաբերյալ համապատասխան գործադիր կոմիտեներին, իսկ մյուս ընտրողական հանձնաժողովների վերաբերյալ—բարձր կանգնած գործադիր կոմիտեներին։

11. Ընտրողական հանձնաժողովները, վոր նախատեսված են սույն հրահանգի 3-8 հոդվածներում, կազմվում են ընտրողական պայքարի համար ժամանակով, վորը սահմանվում է բարձր կանգնած ընտրողական հանձնաժողովների կողմից, և ցրվում են ժամանակով վորը սահմանվում է նույն հանձնաժողովների կողմից, բայց վոչ ուշքան մի ամսվա ժամանակամիջոցում, սկսած ընտրողական պայքարի վերջանալու որից, համապատասխան տերրիտորիայի վրա։

12. Ընտրողական հանձնաժողովների իրավունքներն ու պարտականությունները են.

ա) Դիտել, վորպեսզի ընտրությունների կատարումը համապատասխան տերրիտորիայի վրա լինի որինական և ժամանակին, կատարվեն ընտրողական պայքարի համար սահմանված կանոնները, նորման և ժամանակը.

բ) Սահմանել ստորև կանգնած ընտրողական հանձնաժողովները կազմելու և ցրվելու համար ժամանակամիջոց.

գ) Ղեկավարել ստորև կանգնած ընտրողական հանձնաժողովների և սրանց լիազորների աշխատանքը.

դ) Բացատրություն տալ համապատասխան գործադիր կոմիտեներին ստորև կանգնած ընտրողական հանձնաժողովների ցրվելու մասին, առանձին անդամների վերաբերյալ բացարկ տալու մասին, նաև ստորև կանգնած ընտրողական հանձնաժողովի այն վորոշումների փոխելու մասին, վորոնք հիմնվում են ստորև կանգնած գործադիր կոմիտեների հրահանգի վրա.

ե) Պահանջել ստորև կանգնած ընտրողական հանձնաժողովներից հաշվետվություն, կատարված աշխատանքի համար.

զ) Ներկայացնել տեղեկություններ և ամփոփումներ բարձր կանգնած ընտրողական հանձնաժողովներին և համապատասխան գործադիր կոմիտիներին ընտրությունների ընթացքի և հետևանքի մասին, և մասնավորապես, ընտրություններին մասնակցողների քանակի մասին.

ը) Ներկայացուցիչներ ուղարկել դեպի ստորև կանգնած ընտրողական հանձնաձողովները ծանոթանալու սրանց աշխատանքի և ընտրողական պայքարի ընթացքի մասին.

թ) Քննել ստորև կանգնած ընտրողական հանձնաժողովների գործողությունների վերաբերյալ գանգատներ ու բողոքներ։

13. Գյուղական և քաղաքային ընտրողական հանձնաժողովները, իսկ այն քաղաքներում, ուր կազմված են ռայոնական ընտրողական հանձնաժողովներ, նաև ռայոնական հանձնաժողովները, բացի սույն հրահանգի „ա“, „գ“ հոդվածների կետերում ցուցված ֆունկցիաներից, պարտավորվում են՝—

ա) Կազմել, քննել, ստուգել և հայտարարել ընտրողական իրավունքից զրկվածների ցուցակը.

բ) Ընտրողական անվանական ծանուցագիր (повестка) ուղարկել ընտրողներին և տեղեկացնելու այլ միջոցներ ձեռք առնել ընտրողական ժողովների տեղի և ժամանակի մասին.

գ) Բաժանել տերրիտորիան և ընտրողներին ընտրողական թաղերի.

դ) Կազմակերպել ընտրողական ժողովները.

ե) Նշանակել լիազորներ ընտրողական ժողովներին նախագահելու համար։

ԳԼՈՒԽ II.

Ընտրողական իրավունքներից զրկելու մասին.

14 Ընտրողների և ընտրողական իրավունքներից զրկվածների ցուցակները կազմելիս ու ստուգելիս, ընտրողական հանձնաժողովները պետք է ի նկատի ունենան, վոր ՌՍՖՍՀ-ն Սահմանադրությունը զրկում է ոտանձին անհատ-

ների և առանձին բնակչական խմբերին ընտրողական իրավունքներից, այն է.

ա) Նրանց, վորոնք ոգտվելիս են յեղել կամ ներկայումս ոգտվում են վարձու աշխատանքից շահ քաղելու նպատակով։

բ) Նրանց, վորոնք ապրելիս են յեղել կամ ներկայումս ապրում են վոչ աշխատանքային յեկամուտներով, նաև զբաղվելիս են յեղել կամ ներկայումս զբաղվում են առևտրով։

գ) Այլ անհատների. վորոնք իրենց դասակարգային դիրքով ընտրությունների մոմենտին, կամ իրենց անցյալ գործունեությամբ, վերաբերվում են ընտրողական իրավունքներից զրկվածների կատեգորիային, համաձայն ԻՍՖԽՀ-ն Սահմանադրության 69-րդ հոդվածի։

15. Առանձին կատեգորիաների քաղաքացիներից, համաձայն սույն հրահանգին 14-րդ հոդվածի, չեն կարող ոգտվել ընտրողական իրավունքներից.

ա) Այն յերկրագործները, վորոնք ոգտվում են վարձու աշխատանքից, ժամանակավոր կամ մշտական, այն չափով, վոր լայնացնում է նրա անտեսությունը, աշխատանքային սահմաններից դուրս։

Ծանոթություն. Աշխատանքային անտեսության հիմնական հատկանիշ կարելի յե համարել ավելի դեպքում վարձու աշխատանքի ոժանդակավոր լինելը և անտեսության առորյա աշխատանքներին նրա՝ աշխատանքի ընդունակ բոլոր անդամների պարտադիր մասնակցությունը։

բ) Այն յերկրագործները, վորոնք յերկրագործական անտեսության հետ միասին ունեն

նաև սեփական կամ կապալով վերցրած արհեստային և արդյունաբերական հիմնարկություններ (ջրաղաց, ձավարաղաց, յուղագործարան և այլն), վորոնք տարվում են ժամանակավոր կամ մշտական վարձու աշխատանքի միջոցով.

գ) Այն յերկրագործները, վորոնք զբաղված են յերկրագործական անտեսությունից դուրս նաև անասուն, դյուղատնտեսական մթերքներ գնելով և վերածախելով արհեստի ձևով (չարչի, ջավդար).

դ) Նրանք, վորոնք ճորտագրում են շրջապակ բնակչությանը սիստեմատիկաբար տալով նրան ոգտվելու համար իրենց դյուղատնտեսական մեքենաները, աշխատավոր անասունը և այլն, կամ մշտապես զբաղված են բնակչությանը սարկացնող պայմաններով վարկ տալով (փողով կամ ապրանքով).

ե) Այն անայնագործները և արհեստավորները, վորոնք մշտապես աշխատող ձեռքեր են վարձում, բացի այն դեպքերից, վորոնք նախատեսված են սույն հրահանգի 16-րդ հոդվածի «դ» կետում.

զ) Արդյունաբերական տիպի հիմնարկությունների տերերը, նախաձեռնողները և կապալառուները, վորոնք շահագործում են բնակչությանը տալով այս կամ այն աշխատանքը տանը անելու համար.

ը) Արդյունաբերական գործարանային տիպի հիմնարկությունների տերերը և կապալառուները։

թ) Մասնավոր առևտրականները և չարչիները

ժ) Սպիտակ բանակների նախկին սպաները և զինվորական պաշտոնյաները, նաև հակահեղափոխական բանդաների ղեկավարները.

Ծանոթություն. Այս կետում թված անհատներից կարող են ոգտվել ընտրողական իրավունքից միայն նրանք, վորոնց վերաբերյալ կան ՍԽՀՄ-ի կամ ՌՍՖՍՀ-ի կառավարության համապատասխան ակտեր, կամ սպիտակ բանակների այն նախկին սպաները և զինվորական պաշտոնյաները, վորոնք ապա ծառայել են Կարմիր Բանակում կամ Կարմիր Նավատորմում և ակտիվ կերպով մասնակցել են Խորհրդային Հանրապետությունների զինված պաշտպանության, կամ վորոնք ներկայումս գտնվում են ՍԽՀՄ-ի Կարմիր Բանակում և Կարմիր Նավատորմում իսկական զինվորական ծառայության մեջ։

ի) Բոլոր ծառայողները և գործակալները նախկին վոստիկանության, առանձին ժանդարմական մարմնի, պահնորդական բաժինների, թաղավորական տան անդամները, նույնպես այն բոլոր անձնավորությունները, վորոնք ուղղակի կամ կողմնակի կերպով ղեկավարել են վոստիկանության, ժանդարմերիայի և պատժիչ մարմինների գործունեությունները ինչպես ցարական կարգերում, նույնպես և սպիտակ ու հակայեղափոխական կառավարությունների որով, վորպեսիք են՝ նախկին մինիստրները, նրանց ոգնականները, դ պարտամենտների կառավարիչները, գեներալ-նահանգապետները, արտակարգ պահնորդական զորախմբի գլխավոր պետերը, զինվորական և քաղաքացիական նահանգապետները, փոխ-նահանգապետները, նահանգական և գավառական ազնվական առաջնորդները, առանձին պատվերների պաշտոնյաները, քրեական դեպարտամենտների ավագ նախագահները և անդամները, նույնպես դատարանային պալատների դատախազները և դատախազների ոգնականները, կարևորագույն գործերի քննիչները, բոլոր տեսակ զինվորական դատարանների նախագահները, անդամները, դատախազները, դատախազների ոգնականները և քննիչները, նախագահները և անդամները այն քննիչ հանձնաժողովների, վորոնք գործել են սպիտակ հակահեղափոխական կառավարությունների կողմից գրված տերրիտորիայի վրա, նահանգական վարչությունների անդամները, դյուղացիական և գավառական պետերը, վոստիկանապետները, ներքին գործերի մինիստրության պաշտոնյաները և բանտային վարչության բոլոր ծառայողները։

լ) Բոլոր դավանանքների և աղանդների կրոնական ծիսակատարողները, վորպիսիք են՝ կուսակրոնները, կույսերը, քահանաները, տիրացուները, սարկավագները, մոլլաները, մռեձինները, ռաբբիները, դաղլները, կանդոլները, շամանները, բակսերը, կսենձները, պատորները, դպիրները և այլ անուանների անձնավորություններ, վորոնք կատարում են համապատասխան պարտականություն, անկախ այն բանից—սահմանում են թե վ չ այդ պարտականությունները կատարելու համար վարձատրություն։

ի) Վերջապես արտաքսվածները, նաև նրանք, վորոնց վերաբերյալ կայացել է դատարանային վորոշում, վորը զրկում է նրանց, վճռաբեկ մինիստրի հետ կապ պահպանելու

համար, իրենց նախկին բնակավայրում ապրելու իրավունքից. նույնպես նրանք, որոնց իրավունքները կրճատված են դատարանական վարչությամբ։

Ծանոթություն. Այն անձնավորությունները, որոնք գտնվում են ազատությունից զրկող տեղերում, որպես քննության և դատի տակ գտնվողներ, և որոնք դատարանների որոշմամբ պատիժ են կրում, բայց չեն զրկված իրավունքներից, չեն կարող մասնակցել խորհուրդների ընտրություններին բոլոր ժամանակ, քանի գտնվում են ազատությունից զրկող տեղերում։

ծ) Այն անձնավորությունները, որոնք որոշված կարգով ճանաչված են հոգեպես հիվանդ։

կ) Այն ընտանիքների անդամները, որոնք ՌՍՖՍՀ-ն Սահմանադրության 69-րդ հոդվածի «ա», «բ», «գ», «դ» և «ե» կետերի համաձայն և սույն հոդվածի համապատասխան կետի համաձայն զրկված են ընտրողական իրավունքներից, այն դեպքերում, երբ նրանք նյութապես կախում ունին ընտրողական իրավունքներից զուրկ անձնավորություններից, և իրենց գոյության համար չունին ինքնուրույն հասարակականապես ոգտավետ աշխատանք։

Ծանոթություն. Ընտանիքների անդամները այն ստորին ծառայողների, որոնք զրկված են ընտրողական իրավունքներից ՌՍՖՍՀ-ի 69-րդ հոդվածի «ե» կետի համաձայն և սույն հոդվածի „ի“ կետի համաձայն, ընտրողական իրավունքներից չեն զրկվում։

16. Չեն կարող ընտրողական իրավունքներից զրկվել ստորև հիշված կատեգորիաների անձնավորությունները, եթե այս անձնավորություն-

ները զրկված չեն ընտրողական իրավունքներից ուրիշ հիմունքներով, որոնք նախատեսված են ՌՍՖՍՀ-ն Սահմանադրության 69-րդ հոդվածով և սույն հրահանգով։

ա) Գյուղացի-երկրագործները, որոնք իրենց տնտեսության մեջ ոգտվում են մեկ մշտական մշակի աշխատանքից առանձին պայմաններով, որպիսիք են՝ հիվանդություն, զորահավաք, ժամանակավոր աշխատանքային ծառայություն գնալը, հատարակական պաշտոնի համար ընտրվելը, որ պահանջում է անջատվել տնտեսությունից և այլն, տնտեսության ավյալ դրության մեջ գտնվելու ամբողջ ժամանակամիջոցին.

1003
4680

բ) Ցերկրագործները, որոնք աշխատանքի յեռուն ժամանակ վարձում են, ժամանակավորապես, 2 հոգուց վոչ ավելի, մշակներ բերքը հավաքելու համար.

գ) Այն անձնավորությունները, որոնք զբաղվում են գյուղատնտեսությամբ և իրենց աշխատանքի արտադրությունը վաճառում շուկայում։

դ) Արհեստավորները և տնայնագործները, որոնք աշխատանքային տնտեսություն են վարում առանց վարձու աշխատանքից ոգտվելու, նույնպես նրանք, որոնք ոգտվում են, արտադրության պայմաններից զրկված, մեկ հասակավոր բանվորի կամ յերկու աշակերտների վարձու աշխատանքից.

ե) Սպիտակ բանակների կողմից ժամանակին զորահավաքի յենթարկված բանվորները, ստորին

Ա. Զ. ՀԱՆՐԱՅԻՆ ... Публичная Б...

ծառայողները, աշխատավոր գյուղացիները, կազակները, արհեստավորները և տնայնագործները.

զ) Նրանք, որոնք տակոս են ստանում աշխատանքային ներմուծած գումարներից և պետական, կոմունալ և կոոպերատիվ փոխառությունների օրլիգացիաներից, պայմանով, որ այդ յեկամուտները չեն հանդիսանում նրա ապրուստի հիմնական աղբյուրը.

ը) Այն անձնավորությունները, որոնք հատուկ պատճառներից զրկված, զբաղվում են մանր առևտրով, որպիսիք են՝ աշխատանքի և պատերազմի ինվալիդները, որոնք առևտուր են անում Ս ցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսարիատի ձրի պատենտներով, գործազուրկ բանվորները, և ծառայողները (որոնք գտնվում են աշխատանքի միջնորդական բյուրոյի հաշվեառվության տակ). որոնք վերցնում են 1-ին կարգի պատենտ, յեթե այդ զբաղմունքը նրանց համար հանդիսանում է ժամանակավոր.

թ) Այն անձնավորությունները, որոնք վարձով կամ կրոնական հատանքների ընտրելով զբաղված են վարչա-տնտեսական և տեխնիկական ծառայությամբ կրոնական ծիսակատարությունների շենքերում կամ կրոնական ընկերությունների մեջ, որպիսիք են՝ պահապաններ, մաքրողներ, ժամհարներ, յերգիչներ և այլն, նույնպես և նրանք, որոնք պայմանագրով ընդունել են յեկեղեցիներ կամ յեկեղեցական կայքեր, կամ անդամ են ծխական խորհուրդների և համայնքների։

ժ) Ազատ արհեստի տեր մարդիկ, որոնք զբաղված են հասարակականապես ոգտավետ աշխատանքով, յեթե նրանք չեն շահագործում ուրիշի աշխատանքը շահ քաղելու նպատակով։

17. Իշխանության տեղական օրգանների կողմից ընտրողական իրավունքից զրկելը այն անձնավորություններին, որոնք չեն ընկնում ՌՍՖԽՀ-ն Սահմանադրության 69 հոդվածի և սույն հրահանգի 14 և 15 հոդվածների տակ, չի թույլատրվում և տեղի յե ունենում միմիայն ՀԿԳԿ-ի Նախագահության վորոշմամբ ՌՍՖԽՀ-ն Սահմանադրության 14 հոդվածի հիման վրա։

ԳԼՈՒԽ III.

Թե ինչ կերպով պիտի վերականգնել ընտրողական իրավունքները վերջ՝ այդպիսիներից զրկվածներին։

18. Այն անձնավորությունները, որոնք զրկված են ընտրողական իրավունքից, ՌՍՖԽՀ-ն Սահմանադրության համաձայն, որպես նախկին ծառայողներ վոտիկանության, ժանդարմների մարմին, պատժիչ օրգանների, սպիտակ սպաներ և այլն (սույն հրահանգի 15 հոդ. «ի» և «լ» կետերը) կարող են առանձին դեպքերում վերականգնվել ընտրողական իրավունքների մեջ Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հատուկ վորոշումներով, պայմանով, յեթե այդ անձնավորությունները ներկայումս զբաղված են արտադրողական և հասարակականապես

ոգաավետ աշխատանքով և ապացուցել են իրենց չեզոքությունը Խորհրդային Իշխանության հանդեպ։

19. Այն անձնավորությունները, որոնք զրկված են ընտրողական իրավունքներից, որպես շահագործողների դասակարգին պատկանողներ (կալվածատերեր, բուրժուազիա, կրոնական ծիսակատարություններ կատարողներ), կարող են վերականգնել ընտրողական իրավունքների մեջ, պայմանով, յեթե նրանք հինգ տարուց վոչ պակաս ժամանակամիջոցի ընթացքում զբաղված են արտադրողական և հասարակականապես ոգտավետ աշխատանքով և ապացուցել են իրենց չեզոքությունը Խորհրդային Իշխանության հանդեպ—որոշմամբ յերկրային, շրջանային, նահանգական ընտրողական հանձնաժողովների, իսկ ինքնավար հանրապետություններում, որոնք չունին նահանգական բաժանում, հանրապետական ընտրողական հանձնաժողովների բաժանում, հանրապետական ընտրողական հանձնաժողովին։

20. Ընտրողական իրավունքների մեջ հաստատելու վերաբերյալ խնդրագրիը անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին անձնավորությունները, որոնք հիշված են սույն հրահանգի 19 հոդվածի մեջ, տալիս են տեղական խորհրդին, որը իր կարծիքով հանդերձ ուղարկում է համապատասխան ընտրողական հանձնաժողովին։

ԳԼՈՒԽ IV.

Ընտրողական իրավունքներից զրկվածների ցուցակներ կազմելու մասին.

21. Գյուղական և քաղաքային խորհուրդները վարում են մշտական անվանական հաշվեառություն ընտրողական իրավունքներից զրկված անձնավորությունների համար առանձին գյուղական և քաղաքային բնակավայրերի վերաբերյալ։

22. Ընտրողական իրավունքներից զրկված անձնավորությունների հաշվեառումը կատարվում է փաստացի բնույթ կրող տեղեկությունների հիման վրա։

ա) Այն անձնավորությունների վերաբերյալ, որոնք ընտրողական իրավունքներից զրկված են դատարանով, և նրանց վերաբերյալ, որոնք դատարանների որոշմամբ արտաքսված են իրենց մշտական բնակավայրից,—համապատասխան դատարանական որդանների որոշման պատճենը կամ տեղեկությունը։

բ) Այն անձնավորությունների վերաբերյալ, որոնք ոգտվում են վարձու աշխատանքից շահ քաղելու նպատակով, կամ որոնք ապրում են վոչ աշխատանքային յեկամուտներով,—ֆինանսական որդանների տեղեկությունները նրանց կողմից յեկամուտային կամ արհեստավորական հարկ վճարելու մասին, ապահովագրական դրամարկղների տեղեկությունները նրանց կողմից ապահովագրական տուրք վճարելու մասին և այլն։

գ) Առևտրով զբաղվող անձնավորությունների վերաբերյալ—ֆինանսական որդանների տեղեկությունները նրանց կողմից պատենա վերցնելու կամ նրանց կապալով առևտրական շենքեր տալու մասին։

դ) Խելազուրկների և հոգեպես հիվանդների վերաբերյալ—առողջապահական որդանների ակտերը կամ այդ ակտերի վավերացված պատճենները նրանց խելազուրկ կամ հոգեպես հիվանդ ճանաչելու մասին։

ե) Նախկին վոստիկանության ծառայողների և գործակալների և բոլոր այլ անձնավորությունների վերաբերյալ, վորոնք հիշված են սույն հրահանգի 15 հոդվածում—վարչական որդանների կամ վիճակային գործադիր կոմիտեների և գյուղական խորհուրդների տեղեկությունները, նաև Պետական Քաղաքական Վարչության տեղեկությունները։

23. Այն դեպքերում, յերբ մի վորևե աղբյուրից տեղեկություն է ստացվում տեղական խորհրդում, վոր այս կամ անձնավորությունը պատկանում է ընտրողական իրավունքներից զրկվածների վորևե կատեգորիային, խորհուրդը ստուգում է այդ տեղեկությունների ճիշտ լինելը և, հաստատվելու դեպքում, մացնում է այդ անձնավորությունը ընտրողական իրավունքներից զրկվածների ցուցակը։

24. Ընտրողական հանձնաժողովները, քաղաքային և գյուղական խորհուրդների կողմից ներկայացրած ցուցակների ու տվյալների հիման վրա, կազմում են ընտրողական իրավունքներից զրկվողների ցուցակը։

Ընտրողական հանձնաժողովները (գյուղական և քաղաքային), ընտրողական իրավունքներից զրկվողների ցուցակը կազմելիս, պարտավոր են ստուգել անհատապես այս կամ այն անձնավորության՝ ընտրողական իրավունքներից զրկվողների կատեգորիայի դասելու ճիշտ լինելը՝ փաստացի բնույթ կրող տեղեկությունների հիման վրա, վորոնք ցուցված են սույն հրահանգի 22 հոդվածում։

25. Ընտրողական հանձնաժողովները ընտրողական իրավունքներից զրկվածների ցուցակը հայտարարում են վոչ ուշ քան 20 որ առաջ մինչև համապատասխան խորհրդի ընտրությունների սկիզբը, պարտադիր կերպով ցուցադրելով այդ ցուցակը, նույնպես հայտարարելով այն ժողովներում, մամուլի մեջ և այլն։

26. Ընտրողական հանձնաժողովը ընտրողական իրավունքներից զրկվողների ցուցակի մի օրինակը ուղղում է՝ գյուղերում—գյուղական խորհրդին, քաղաքներում—քաղաքային խորհրդին, յերկրորդ և յերրորդ օրինակը—բարձր կանգնած ընտրողական հանձնաժողովին և բարձր կանգնած գործադիր կոմիտեին։

ԳԼՈՒԽ Մ.

Թե ինչ կարգով պիտի ընն խաղաքաղաքացիների զանգվածները նրանց ընտրողական իրավունքներից զրկելու մասին.

27. Այն անձնավորությունները, վորոնք ընտրողական հանձնաժողովների վորոշմամբ մերժվել են ընտրողական իրավունքներից զրկված-

ների ցուցակը, իրենց կարծիքով, խախտելով ՌՍՖՍՀ Սահմանադրության 69 հոդվածը և սույն հրահանգի 14, 15 և 16 հոդվածները, կարող են բողոքել այդ վորոշումների դեմ մի շաբաթվա ընթացքում, սկսած ցուցակի ցուցադրելու կամ հայտարարելու որից։ Բողոքը տրվում է այն ընտրողական հանձնաժողովին, վորը կազմել է ցուցակը։

28. Գյուղական ընտրողական հանձնաժողովները, ստանալով բողոքը, պարտավոր են յերեք որվա ընթացքում ուղարկել այն, իրենց կարծիքի հետ միասին, բարձր կանգնած ընտրողական հանձնաժողովին։

29. Գյուղական ընտրողական հանձնաժողովի վորոշումների դեմ այն գանգատները, վորոնք ստացվում են ռայոնական, վիճակային կամ սրանց համապատասխան ընտրողական հանձնաժողովների մեջ, քննվում են յերեք որվա ընթացքում։ Ռայոնական վիճակային կամ համապատասխան ընտրողական հանձնաժողովը, յեթե բավարարում է գանգատը, վերադարձնում է այն, իր վորոշման հետ միասին, գյուղական ընտրողական հանձնաժողովին՝ հայտարարելու համար գանգատավորներին. իսկ մերժելու դեպքում—գանգատը ուղարկում է շրջանային, գավառային կամ համապատասխան ընտրողական հանձնաժողովին, վորը նույն ժամանակամիջոցին ինչպես և ռայոնականը (վիճակայինը), պարտավոր է քննել գանգատը և վճիռ կայացնել կամ ստորև կանգնած հանձնաժողովի վորոշումի վավերացնելու մասին, կամ գանգատի բավարարելու մասին։

Շրջանային, գավառային կամ համապատասխան ընտրողական հանձնաժողովի վորոշումը հաղորդվում է ստորև կանգնած ընտրողական հանձնաժողովին և հայտարարվում է գանգատավորին։

30. Վոչ նահանգական քաղաքներում նույնպես և անգավառ (շատից դուրս) քաղաքներում և բանվորական ավաններում, վորոնք ունեն քաղաքային խորհուրդներ, քաղաքացիք գանգատ են տալիս քաղաքային ընտրողական հանձնաժողովին, վորոնք պարտավոր են քննել գանգատը յերեք որվա ժամանակամիջոցում, իսկ մերժելու դեպքում, ուղարկել այն, իրենց կարծիքի հետ միասին, գավառական, շրջանային և համապատասխան հանձնաժողովին, վորը նույն ժամանակամիջոցին, ինչպես և քաղաքայինը, պարտավոր է քննել գանգատը և՝ վճիռ կայացնել։

Շրջանային, գավառային կամ համապատասխան ընտրողական հանձնաժողովի վորոշումը հաղորդվում է քաղաքային ընտրողական հանձնաժողովին և հայտարարվում է գանգատավորին

31. Նահանգական, շրջանային և համապատասխան քաղաքների, իսկ ինքնավար հանրապետությունների մեջ գլխավոր քաղաքների քաղաքացիների գանգատները իրենց ընտրողական իրավունքներից զրկելու մասին քաղաքային ընտրողական հանձնաժողովների կողմից, տրվում են այդ հանձնաժողովներին, վորոնք քննում են գանգատները յերեք որվա ընթացքում և, մերժելու դեպքում ուղարկում են գանգատը, իրենց վորոշումի հետ միասին, նահանգային, շրջանային և համապատասխան ընտրողական հանձնաժողովին, իսկ ինքնավար հանրապետություններ-

բում, վորոնք նահանգական բաժանում չունին, —հանրապետական ընտրողական հանձնաժողովներին։ Հիշյալ հանձնաժողովները ստացած գանգատները քննում են մի շաբաթվա ժամանակամիջոցում։

Նահանգական, շրջանային և համապատասխան ընտրողական հանձնաժողովների վորոշումները, իսկ ինքնավար հանրապետություններում, վորոնք նահանգական բաժանումներ չունեն, հանրապետական ընտրողական հանձնաժողովի վորոշումները հաղորդվում են քաղաքային ընտրողական հանձնաժողովներն և հայտարարվում են գանգատավորին

Ծանոթություն. Այն քաղաքներում, վորոնք, ցուցված են սույն հրահանգի 30 և 31 հոդվածներում, և ունին ռայոնական ընտրողական հանձնաժողովներ, գանգատները տրվում են այդ հանձնաժողովներին, վորոնք քննում են նրանց յերեք որվա ժամանակամիջոցում, և մերժելու դեպքում ուղղում են դեպի քաղաքային ընտրողական հանձնաժողովները։ Հիշյալ գանգատների հետագա քննությունը կատարվում է այն կարգով և ժամանակամիջոցին, վորոնք նախատեսված են սույն հրահանգի 30 և 31 հոդվածներում։

32. Հսկողության կարգով, գանգատները ընտրողական իրավունքներից զրկելու մասին, կարող են քննվել Համառուսական Կենտրոնական Ընտրողական Հանձնաժողովի և Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից։

33. Ընտրողական հանձնաժողովների աշխատանքների ավարտելուց հետո ընտրողական իրավունքներից զրկված անձավորությունների գանգատների լուծումը կատարվում է համապատաս-

խան խորհուրդներում և գործադիր կոմիտեներում։

ԳԼՈՒԽ VI.

Ընտրողական ժողովների մասին.

34. Խորհուրդների անդամների ընտրությունները կատարվում են ընտրողական ժողովներում։

35. Ընտրողական ժողովները հրավիրվում են ընտրողական հանձնաժողովի կամ նրա լիազորի կողմից։ Ընտրողական ժողովի տեղի և ժամանակի մասին ընտրողները տեղեկացվում են անվանական հաղորդագրերով վոչ ուշ, քան 5 որ առաջ։

36. Քաղաքներում և բանվորական ավաններում ընտրողական ժողովները կազմվում են արտադրողական կամ պրոֆեսիոնալ միավորների մեջ (նախաձեռնություններում, հիմնարկություններում և պրոֆեսիոնալ միություններում)։ Այն քաղաքացիք, վորոնք չեն մտնում նախաձեռնությունների մեջ և չեն կազմակերպված պրոֆեսիոնալ միություններում, վորպիսիք են՝ տրնայնագործներ, տանտիկիններ, կառապաններ և այլն, մասնակցում են ընտրություններին կամ ստացած ընտրողների հետ միասին արտադրողական կամ պրոֆեսիոնալ միավորների մեջ, կամ տերրիտորիալ միավորների մեջ (ռայոններում, թաղերում և այլն)։

Ծանոթություն՝ Խոշոր արդյունաբերական նախաձեռնություններում ընտրողական ժողովները կարող են կատարվել նախաձեռնության առանձին մասերում և հերթով, ըստ վորում թույլ

է տրվում ներկայացնել նախաձեռնության համար թեկնածուների ընդհանուր ցուցակ և քվեարկել։

37. Ընտրությունները գյուղական խորհուրդների համար, որոնք ընդգրկում են մի քանի գյուղեր, կատարվում են առանձին գյուղերում, յերբ այդ գյուղերում կան մեկ պատգամավոր ընտրելու համար բավական քանակով ընակիչներ և մի քանի գյուղերի միացյալ ժողովներում, յերբ նրանց ընակչությունը սակավաթիվ է և նրանց միջև գտնված տարածությունները անանցանելի։

Գյուղական տեղերում խոշոր գյուղերը գյուղական խորհուրդ ընտրելու համար պետք է բաժանվեն մի քանի ընտրողական թաղերի, ըստ որում ազգերի փոքրամասնությունների խոշոր գրուպպաները կարող են առանձնանալ հատուկ թաղերում ըստ ազգային հատկանիշի։

Ընտրողական թաղերը գյուղական տեղերում պետք է միացնեն 500 հոգուց վոչ ավելի ընակչություն։

Ծանոթություն՝ Խուտորների ընտրողները, խորհրդային տնտեսությունների ծառայողներն ու բանվորները, նույնպես և քաղաքային ընակչություններից և ավաններից դուրս գտնվող և իրենց խորհուրդներ չունեցող գործարանների և ֆաբրիկաների բանվորներն ու ծառայողները միանում են խորհրդի համար ընտրություններ կատարելու մոտակա գյուղում, վորը մտնում է ընտրվող գյուղխորհրդի ռայոնը։

38. Ընտրողական ժողովներին մասնակցում են միայն այն անձնավորությունները, որոնք ընտրելու իրավունք ունեն։

39. Բոլոր ընտրողական ժողովներում պի-

տի հաշվի առնվեն ընտրություններին յեկածները։

40. Ընտրողական ժողովը համարվում է կայացած, յեթե նրա մեջ ներկա յեն 35 տոկոսից վոչ պակաս այն անձնավորությունների, որոնք իրավունք ունեն մասնակցելու ընտրություններին տվյալ ընտրողական թաղում։

41. Ընտրողական ժողովը, որին յեկել են տվյալ ընտրողական թաղի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցողների 35 տոկոսից պակաս թվով, համարվում է չկայացած, որի մասին կազմվում է արձանագրություն և կցվում ընտրությունների արարողությանը, իսկ ընտրողական ժողովը հետաձգվում է մոտիկ օրերից մեկը, տեղեկացնելով այս մասին ընտրողներին։

42. Ընտրողական ժողովը բացում է դրա համար ընտրողական հանձնաժողովից լիազորված անձը և տարվում է նախագահության կողմից ընտրողական հանձնաժողովի լիազորի նախագահությամբ։ Նախագահության կազմի մեջ են մտնում՝ ընտրողական հանձնաժողովի լիազորը և յերկու հոգի, ընտրված ժողովից։ Ընտրողական ժողովի բացելուց հետո նախագահը պարտավոր է.

ա) Ծանոթացնել ժողովականներին ընտրությունների կարգի մասին, որի համար հայտարարել ՌՍՖԽՀ-ն Սահմանադրության 68 և 69 հոդվածները այն անձնավորությունների մասին, որոնք ունեն ընտրողական իրավունք և զրկված են այդպիսուց, նույնպես խորհուրդների ներկայացչության նորմաների որենքները և սույն

հրահանգի 34-48 հոդվածները։

բ) Հայտարարել ընտրողների քանակը և ընտրությունների ենթակաների քանակը.

գ) Հայտարարել այն մարդկանց ցուցակը վորոնք զրկված են ընտրողական իրավունքներից տվյալ ժողովին.

դ) Հայտարարել առանձին թեկնածուների անուն-ազգանունների ցուցակները, վորոնք ստացվել են նախ քան ընտրողական ժողովը, նույնպես և ընտրողական ժողովի ժամանակ, մատնանշելով, թե ումից են ստացված ցուցակները.

ե) Հայտարարել, թե քանի հոգի պիտի ընտրվեն տվյալ ժողովում։

43. Մարդկանց թիվը, վորոնք պետք է ընտրվեն յուրաքանչյուր ընտրողական թաղում, վորոշվում է տեղական ընտրողական հանձնաժողովի կողմից համապատասխան ընտրողական նորմաներով, համեմատ ընտրողների թվին (քաղաքներում և բանվորական ավաններում) կամ բնակչության (գյուղական տեղերում) տվյալ ընտրողական թաղի։

44. Քվեարկությունը ընտրություններին կատարվում է կամ ցուցակներով կամ առանձին թեկնածություններով (անհատապես) համաձայն ընտրողական ժողովի վորոշման։

Ծանոթություն 1. Ընտրողական հանձնաժողովները և սրանց լիազորներ իրավունք չունեն իրենց կողմից առաջադրել կամ առաջարկել ընտրողներին վոչ առանձին թեկնածուներ, վոչ թեկնածուների ցուցակներ։

Ծանոթություն 2. Թեկնածուների ցուցակներ կամ առանձին թեկնածուներ կարող են առաջարկվել թե հասարակական, կուսակցական

և պրոֆեսիոնալ կազմակերպությունների կողմից, և թե առանձին քաղաքացիների կողմից, թե իսկ ընտրողական ժողովին, և թե հայտարարվել մինչև ընտրողական ժողովը մամուլի միջոցով կամ ցուցադրելով։ Ցուցակներով քվեարկելը չի արգելում բացարկ տալ ցուցակի մեջ մտցված այս կամ այն թեկնածուներին։

45. Ընտրությունները կատարվում են բաց քվեարկությամբ։ Խորհուրդների անդամ ընտրված են համարվում նրանք, վորոնք ստացել են ձայների հարաբերական մեծամասնություն։

Ծանոթություն. Հարաբերական մեծամասնության իմաստով պետք է ընդունել այնպիսի մեծամասնություն, վորը ավելի մեծ է համեմատած մյուս թեկնածուների ստացած ձայների քանակի հետ, ըստ վորում «դեմ» և «ձեռնպահները» չեն հաշվում։

46. Ընտրողական ժողովները, բացի պատգամավորներից, ընտրում են նաև թեկնածուներ՝ թվով պատգամավորների մեկ յերրորդի չափ։

Խորհրդի անդամներին կից թեկնածուները ընտրվում են առանձին քվեարկությամբ, անդամների քվեարկությունից դուրս։

Ծանոթություն. Այն տեղերում, վորտեղ ընտրողական թաղերի քանակը գերազանցում է խորհուրդների անդամներին կից թեկնածուների քանակը, վերջինների ընտրության կարգը սահմանվում է բարձր կանգնած ընտրողական հանձնաժողովների կողմից։

47. Ընտրողական ժողովի ընթացքի մասին ընտրողական ժողովի նախագահությունը կազմում և ստորագրում է արձանագրություն։

48. Բոլոր հայտարարություններն ու գանգատները ընտրությունների մասին տրվում են

7 որվա ժամանակամիջոցում, սկսած ընտրությունների վերջանալու մոմենտից, գրավոր և բանավոր կերպով այն ընտրողական հանձնաժողովին, որը ղեկավարելիս է յեղել ընտրությունները, և որը պարտավոր է ուղարկել այն՝ իրեն բացատրությունների հետ միասին յերեք որվա ընթացքում բարձր կանգնած ընտրողական հանձնաժողովին։ Բարձր կանգնած ընտրողական հանձնաժողովը պարտավոր է քննել այդ գանգատները և հայտարարությունները մի շաբաթվա ընթացքում, սկսած ստանալու որից։

Այն դեպքում յերբ գանգատները ճանաչվեցին հիմնավոր և անհրաժեշտ է ընտրությունները բեկանել ամբողջովին, ընտրողական հանձնաժողովը հայտնում է այդ մասին համապատասխան գործադիր կոմիտեյին, իսկ ընտրությունների մասնակի բեկանելու անհրաժեշտության դեպքում, այս մասին վորոշում է կայացնում և հաղորդում ստորև կանգնած ընտրողական հանձնաժողովին վերընտրություններ կատարելու համար։

49. Աշխատանքներն ավարտելուց հետո ընտրողական հանձնաժողովները ընտրությունների բոլոր նյութերը հանձնում են համապատասխան խորհրդին կամ գործադիր կոմիտեյին։

ԳԼՈՒԽ VII

Խորհուրդների համագումարները գործադիր կոմիտեների ընտրությունները մասին։

50. Խորհուրդների համագումարները հրավիրվում են համապատասխան գործադիր կոմիտեների կողմից և կազմվում են.

ա) Վիճակայինները և ռայոնականները—վիճակի կամ ռայոնի տերրիտորիայի վրա գտնվող բոլոր խորհրդների ներկայացուցիչներից, վորոնք ընտրվում են խորհուրդների կողմից ՌՍՖԽՀ-ն Սահմանադրության 51 հոդվածի «ե» կետի մեջ նախատեսված նորմայով և քանակով.

բ) Գավառականը, շրջանայինը, նահանգականը և յերկրայինը-քաղաքային բնակչություններից դուրս գտնվող գործարանների և ֆաբրիկաների, քաղաքային բանվորական ավանների խորհրդների ներկայացուցիչներից և ստորև կանգնած խորհրդների համագումարներից համաձայն նորմաների, վորոնք սահմանված են ՌՍՖԽՀ-ն Սահմանադրության 51 հոդվածի «ա», «բ», «գ» և «դ» կետերում և հատուկ վորոշումների Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի, վորոնք նախատեսված են, առանձին դեպքերում, ՌՍՖԽՀ-ն Սահմանադրության 51 հոդվածի ծանոթության մեջ.

գ) Համառուսականը—խորհուրդների համագումարների ներկայացուցիչներից ինքնավար հանրապետությունների, վորոնք չունեն նահանգական բաժանումներ, ինքնավար շրջանների, նահանգական և շրջանային, նույնպես և քաղաքների և բանվորական ավանների խորհրդների—այն նորմաներով, վորոնք սահմանված են ՌՍՖԽՀ-ն Սահմանադրության 20 հոդվածով.

Ծանոթություն. Ինքնավար հանրապետությունների և ինքնավար շրջանների խորհրդների համագումարների ներկայացուցչության նորմաները սահմանվում են առանձին որենքով։

51. Համագումարների ընտրությունների և պատվիրակների լիազորությունների ճշտությունը ստուգելու համար յուրաքանչյուր համագումարում ընտրվում է մանդատային հանձնաժողով։

52. Խորհրդների համագումարները մանդատային հանձնաժողովների զեկուցմամբ վորոշումներ են հանում համագումարների համար կատարած ընտրությունների և պատվիրակների լիազորությունների ճշտության մասին։

Ծանոթություն 1. Վերընտրվող գործադիր կոմիտեյի անդամները, վորոնք պատվիրակ չեն համագումարում, ոգտվում են խորհրդակցական ձայնով.

Ծանոթություն 2. Համագումարների նախագահությունների կազմի և գործադիր կոմիտեների համար, նաև վորպես ներկայացուցիչներ բարձր կանգնած համագումարների համար կարող են ընտրվել վոչ միայն համագումարների և խորհրդների անդամները, այլ և առհասարակ ընտրողական իրավունքներ ունեցող բոլոր քաղաքացիները, անկախ նրանց բնակվելու տեղից և աշխատանքից։

53. Համագումարի աշխատանքների ժամանակ, մինչև նոր գործադիր կոմիտեյի կազմ ընտրելը, վորպես իշխանության գործադիր որգան շարունակում է մնալ հին կազմի գործադիր կոմիտեն, վորի ֆունկցիաները դադարում են միայն գործադիր կոմիտեյի նոր կազմի առաջին նիստ գումարելուց հետո։

54. Խորհրդի համագումարի վերջանալուց հետո գումարվում են նոր ընտրված գործադիր կոմիտեյի կազմակերպչական նիստերը, հին կազ-

մի հետ միասին, վորոնց մեջ ընտրվում են նախագահը և գործադիր կոմիտեյի նախագահությունը, նաև բոլոր բաժինների վարիչները։

Ծանոթություն. 1. Գործադիր կոմիտեները իրենց նախագահությունները և նախագահներին ընտրում են անպատճառ իրենց կազմի անդամներից։

Ծանոթություն 2. Գործադիր կոմիտեյի նախկին կազմի անդամները և բաժինների վարիչներ, վորոնք չեն ընտրվել նոր կազմի մեջ, այդ նիստում ոգտվում են խորհրդակցական ձայնով։

ԳԼՈՒԽ VIII.

Գյուղական վիճակային և ռայոնական վերաստուգիչ հանձնաժողովների ընտրությունները.

55. Գյուղական վերաստուգիչ հանձնաժողովները ընտրվում են գյուղական խորհուրդների հետ միաժամանակ ընտրողական ժողովներում թվով—յերեք անդամ և յերկու թեկնածու նրանց կից։

Ծանոթություն. Այն գյուղերում, վորտեղ ընտրողական թաղերի քանակը գերազանցում է ընտրվելիք վերաստուգիչ հանձնաժողովների անդամների և նրանց կից թեկնածուների քանակը, վերջիններս ընտրությունների կարգը սահմանվում է բարձր կանգնած ընտրողական հանձնաժողովների կողմից։

56. Վիճակային և ռայոնական վերաստուգիչ հանձնաժողովները ընտրվում են վիճակային կամ ռայոնական խորհրդների համագումարների կողմից, թվով—3-ից մինչև 5 անդամ և յերկու թեկնածու նրանց կից։

57. Գյուղական, վիճակային և ռայոնական հանձնաժողովների ընտրությունները կատարվում են առանձին քվարկությամբ խորհրդի կամ գործադիր կոմիտեյի անդամների և թեկնածուների ընտրություններից դուրս։

Ծանոթություն. Համապատասխան վերաստուգիչ հանձնաժողովները անդամ չեն կարող ընտրվել նրանք, որոնք ցուցված են գյուղական խորհուրդներին կից վերաստուգիչ հանձնաժողովների վերաբերյալ Կանոնադրության 6 հոդվածի ծանոթության մեջ (Որենսգր. Ժողովածու 1926 թ. № 17, հոդ. 134) և վիճակային (ռայոնական) գործադիր կոմիտեներին կից վերաստուգիչ հանձնաժողովների վերաբերյալ Կանոնադրության 5 հոդվածում (Որենսգր. Ժողովածու 1926 թ. № 17, հոդ. 135)։

ԳԼՈՒԽ IX

Խորհրդների ընտրությունների, վերընտրությունների յեվ շրացուցիչ ընտրությունների բեկելու կարգի մասին.

58. Ընտրությունները բեկվում են հետևյալ հիմունքներով.

ա) ՌՍՖԽՀ-ն Սահմանադրության և սույն հրահանգի նորմաների խախտելու դեպքում.

բ) Այն դեպքում, յերբ հիմնավոր են ճանաչվում քաղաքացիներից ստացված գանգատները ընտրությունները ղեկավարող որգանների ապօրինի գործողությունների դեմ.

59. Նախորդ հոդվածի մեջ հիշված հիմունքների համաձայն ընտրությունների բեկումը կարող ե կատարվել.

ա) Ամբողջովին, այսինքն խորհրդի անդամների ամբողջ կազմի վերաբերյալ.

բ) Մասնակի կերպով, այսինքն խորհրդի առանձին անդամների վերաբերյալ առանձին ընտրողական թաղերում։

60. Ընտրությունները բեկվում են ամբողջական կերպով, յեթե պատգամավորների կեսից ավելին ընտրված են խախտելով սույն հրահանգի կանոնները.

Ընտրությունները բեկվում են մասնակի կերպով, առանձին ընտրողական թաղերում, յեթե սույն հրահանգի կանոնները խախտվել են միայն մեկ կամ մի քանի ընտրողական թաղերում։

61. Ընտրությունների լրիվ կերպով բեկելու հարցը լուծվում ե բարձր կանգնած գործադիր կոմիտեների կողմից, իսկ ընտրությունների մասնակի բեկման հարցը—բարձր կանգնած ընտրողական հանձնաժողովների կողմից։

62. Ընտրությունների բեկման մասին հայտարարվում ե ի ընդհանուր գիտություն կամ տեղական մամուլի մեջ կամ ընտրողների ընդհանուր ժողովներին։

63. Ընտրությունների բեկման դեպքում, նոր ընտրությունները կատարվում են սույն հրահանգով սահմանված կարգով։

64. Ընտրությունների լրիվ բեկման դեպքում, նոր ընտրություններ կատարելու համար կազմվում ե, սույն հրահանգի մեջ ցուցված կարգով, համապատասխան ընտրողական հանձնաժողովի նոր կազմ, իսկ ընտրությունների

մանական բեկման դեպքում, առանձին ընտրողական թաղերում, այդ թաղերում նոր ընտրություններ կատարելու համար նշանակվում են նոր լիազորներ։

65. Առանձին պատգամավորների հեռանալու դեպքում, ընտրողների կողմից հետ կանչելու հետևանքով, մահվան, ընակատեղը փոխելու, ընտրողական իրավունքների կորցնելու և այլն հետևանքով, հեռացված պատգամավորները փոխարինվում են յեղած թեկնածուներով նույն այն թաղում, վորտեղ ընտրվել ե հեռացված պատգամավորը, կամ թեկնածուներ չլինելու դեպքում կատարվում են լրացուցիչ ընտրություններ։

66. Գործադիր կոմիտեների պայմանաժամից առաջ կատարվող վերընտրությունները կամ լրացուցիչ ընտրությունները, անհրաժեշտ դեպքում, տեղի յեն ունենում համապատասխան արտակարգ խորհուրդների համագումարներում, վորոնք կազմվում են ՌՍՖՍՀ-ն Սահմանադրության 52 հոդվածի կարգով։

Համառուսական Կենտրոնական Գործադիր
Կոմիտեյի Նախագահ **Մ. ԿԱԼԻՆԻՆ.**

Համառուսական Կենտրոնական Գործադիր
Կոմիտեյի Քարտուղար **Ա. ԿԻՍԵԼԵՎ.**

[illegible] 1922

«Ազգային գրադարան»
NL0218551